Արձանագրություն N 2

Նուբարաշեն վարչական շրջանի բակային տարածքների և խաղահրապարակների կապիտալ վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/98» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

20.03.2017թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝	Տ. Իգիթյան/ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝	Ե. Կարապետյան /գնահատող/, Ա. Կիրակոսյան /գնահատող/, Կ. Հարությունյան /բացող/, Ա. Հարությունյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝	Ա. Համբարձումյան

1. Տեղեկություններ «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/98» ծածկագրով գնման ընթացակարգին հայտերի բացման մասին

(Տ. Իգիթյան)

Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2017 թվականի մարտի 20-ին, ժամը 10:00-ին, Երևանի քաղաքապետարան, ք. Երևան Արգիշտի 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

2. «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/98» ծածկագրով գնման ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին

(Տ. Իգիթյան)

Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

h/h	Մասնակիցների անվանումը
1	«Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ
2	«Մառք» ՍՊԸ
3	Ա/Ձ Վահրամ Կնյազյան
4	«Օրիոն 7» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3.Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

(Տ. Իգիթյան)

3.1 Բաց ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

Նուբարաշեն վարչական շրջանի բակային տարածքների և խաղահրապարակների կապիտալ վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ

Մասնակցի անվանումը	Նախա-հաշվային գինը	Առաջարկած գինը				
		Ինքնարժեք	Շահույթ	Առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդհանուր
«Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ	340000	108000	12000	120000		120000
«Մառք» ՍՊԸ		116000	8000	124000		124000
Ա/Ձ Վահրամ Կնյազյան		134000	15000	149000		149000
«Օրիոն 7» ՍՊԸ		190000	20900	210900	42180	253080

3.2 Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկներում չկան թվաբանական անճշտություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4.Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

(Տ. Իգիթյան)

4.1 Մասնակիցների կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթներում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ «Օրիոն 7» ՍՊԸ-ի: Մասնակցի կողմից տուժանքի համաձայնությանը կից ներկայացված վճարման պահանջագրի մեջ նշված գումարը չի համապատասխանում հրավերով սահմանված տուժանքի գումարի չափին՝ պակաս է երկու տոկոսից: Գնահատող հանձնաժողովի կողմից մասնակիցի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է:

4.2 Գնահատող հանձնաժողովի կողմից մասնակիցների հայտերը էլեկտրոնային համակարգի միջոցով գնահատվել են հետևյալ կերպ.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
«Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ	Բավարար
«Մառք» ՍՊԸ	Բավարար
Ա/Ձ Վահրամ Կնյազյան	Բավարար
«Օրիոն 7» ՍՊԸ	Անբավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

5. Բաց ընթացակարգի 1-ին և հաջորդաբար տեղեր զբաղեցնող մասնակիցների մասին

(Տ. Իգիթյան)

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/98» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ-ն, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, 2-րդ տեղ՝ «Մառք» ՍՊԸ-ն, 3-րդ տեղ՝ Ա/Ձ Վահրամ Կնյազյան:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

6. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին

(Տ. Իգիթյան)

6.1 Հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին և 2-րդ տեղեր զբաղեցրած մասնակիցների <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ 21.03.2017թ. հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

6.2 21.03.2017թ. ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Հրավերով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ կներկայացվի հաջորդ տեղը զբաղեցրած մասնակիցներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

7. Բաց ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Տ. Իգիթյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 27.03.2017թ. ժամը 10:20-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ---------- Տ. Իգիթյան

Անդամներ՝ ---------- Ա. Հարությունյան

---------- Ա. Կիրակոսյան

---------- Կ. Հարությունյան

---------- Ե. Կարապետյան

Քարտուղար՝ ---------- Ա. Համբարձումյան